

ՄԻՍԱՔ ԴՈՉՈՒՆՅԱՆԻ «ԿՅԱՆՔԻ ՏԵՍԱՐԱՆՆԵՐԸ»

Ա. Ա. ՍԵՎՈՒՄՅԱՆ

Միսաք Դոչունյանը (1863—1913), որը գրական շրջանակներին հայտնի է Քասիմ մականունով, գրեթե անծանոթ է արևելահայ ընթերցողին։ Նրա երկերը երբեք չարժանացան ամբողջական հրատարակության և մնացին մամուլի էջերում կամ առաջին տպագրության սուղ օրինակներում։ Մինչդեռ, Քասիմը նկատելի հետք է թողել 1890—1900-ական թվականների գրական կյանքում։ Աշխատակցել է «Արևելյան մամուլ», «Հայրենիք», «Նոր-Դար», «Բյուզանդիոն» պարբերականներին, խմբագրել է «Մանգումեի էֆքյար» հայատառ թուրքերեն և «Ժամանակ» թերթերը, հանդես է եկել հրապարակախոսական և գեղարվեստական թերթոններով, հեղինակել մի քանի վեպեր։

1897 թ. Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերությունը հրապարակում է նրա «Կյանքի տեսարաններ» նովելների գիրքը։ Մեծ էր արձագանքը «Տեսարանների շուրջը» ժամանակի տարբեր հանդեսներում գրվեցին կարծիքներ, գրախոսություններ։ «Քասիմ» կեղծանվան տակ ծածկված անձը, անշուշտ, տալիս էր զգացումներ, որոնք... Զրույցների ժողովածուն աչքի ընկնող երևույթ է մեր աղքատ գրականության մեջ¹, — գրում է «Մշակի» քննադատը (Տ. Ս.), իհարկե, ոչ միարժեքորեն գնահատելով տեսարաններից յուրաքանչյուրը։ Իսկ Նիկոլ Աղբալյանի պատկերավոր բնորոշմամբ, ամբողջ գիրքը էսքիզների ժողովածու է՝ «Կյանքի վխտացող բաղմաթիվ ու բաղմատեսակ երևույթներով»։ «Քասիմը իրողության մարդ է, կյանքի մարդ է...։ Ժիշտ որ «Կյանքի տեսարաններ»... Դուք կանգնած եք, և կյանքը հոսում է ձեր առաջ, թավալելով իր կոհակները և ձեր աչքին զարկելով իր այս կամ այն կողմը, այս կամ այն արտահայտություններ, երևույթներ։ ...Ամեն տեսարան այստեղ հասարակ, շատ անգամ չնչին սկիզբ ունի, բայց գնալով՝ վերջում ձեզ հարկադրում է կանգ առնել, մտածել»²։

Ժողովածուն բաղկացած է քսան նովելներից, որոնք ավելի շուտ «պատմություններ» ձևին տակ այդ կյանքին բոլոր երևույթներին՝ անդրադարձող վավերագրություններ են՝ ժանոթ դեմքերի ու միջավայրի, անձնական ընկալումների ճշմարիտ ու անպաճույճ նկարագրությամբ։ «Խաբված մայր մը», «Վաճառականներու ճանճը», «Շվարած հայր մը՝ եվրոպական քաղաքակրթության առջև», «Թե ինչու ամեն փեսացու անկեղծ չէ» և մյուս նովելներում հեղինակի գրչից չեն վրիպել վաճառականն ու արհեստավորը, գրագիրն ու մանկավարժը, անհույս գործազուրկն ու քմահաճ աստիճանավորը, շողոքորթ ժամասերը՝ իրենց միջավայրի սոցիալ-կենցաղային մանրամասներով, խոհերով, ապրումներով։ Անդրադառնալով ժամանակի ցավոտ խնդիրներին՝ հեղինակը «սոսկումով է դիտում, թե այս քառորդ գարու ժամանակամիջոցը ինչ փոփոխություններու ենթարկած է մեր բարքերը»³։ «Մերժած ենք մեր վրայեն, մեր տնեն, մեր անձեն, մեր լեզվեն ամեն ինչ՝ որ արևելյան է, որ հայկական է, որ ազգության դրոշմը կկրե և այս ամենուն փոխարեն ընդգրկած ենք եվրոպական քաղաքակրթության ամենախայտառակներն ու ամենեն վնասակարները»⁴։

¹ Քասիմ, Կյանքի տեսարաններ (Մշակ, 1898, № 16)։

² Ն. Աղբալյան, Քասիմ. «Կյանքի տեսարաններ» (Մուրճ, 1898, № 4, էջ 526)։

³ Քասիմ, Կյանքի տեսարաններ, Թիֆլիս, 1897, էջ 57։

⁴ Նույն տեղում, էջ 60։ Այսուհետև «Կյանքի տեսարաններից» արվող մեջբերումների էջերը կնշվեն ընթերցման կից։

Օտարամոլության ու քաղաքենիության «ամենախայտառակ ու ամենայն վրենասակար» դրսևորումների, հոռի բարքերի սուր քննադատությամբ առանձնանում են մի քանի նովելներ:

«Շվարած հայր մը» եվրոպական ֆաղափակրթության առջև» նովելում հաղիվ քսանհինգ տարվա տարբերություն կա հոր և որդու միջև. սակայն տարիքային տարբերությունը չէ հորը հուզողը, այլ կենցաղում, ընտանիքում հարաձուռն փոփոխությունները, որոնք սպառնում են «ոչնչության մատնել մեր սերունդները» (56): Գոչունյանը ամենևին դեմ չէր քաղաքակրթվելուն, դեպի Եվրոպա և եվրոպական մշակույթ ճանապարհ հարթելուն, Սակայն միաժամանակ չէր կարող շտեմանել, որ եվրոպական բարքերի արտաքին ու ձևական նմանակումը՝ «քաղաքակրթություն» որակմամբ, կործանարար հետևանք է ունենում, սպառնում ազգային կերտվածքի աղճատման: «Եվրոպական քաղաքակրթություն համարված օտարամոլությունը բերեց արատներ, մոլեխաղեր և ռեպրեսիաներ է, որ հետզհետե կը կորսնցնենք մեր ազգության բնատիպը. կըլլանք խառնուրդ մը բազմաթիվ ազգերու» (58): Հայր ու որդի հակապատկեր են. հայրը, որպես ազգային հոգեբանության, ազգային բարքերի ու սովորությունների կրող, որդին՝ մարմնացումը այդ ամենից խորթացած «քաղաքակրթության»: «Մեր երկուքնք մեկը հայ չենք,— ճարահատ եզրակացնում է հայրը,— կամ ես, կամ տղաս, որովհետեւ եթե երկուքնքս ալ միևնույն ազգության պատկանեինք՝ պետք է որ հիմնապես պահեինք մեր ազգության բնատիպը, և ճաշակի ու տարիքի վրա միայն կայանար մեր անհամաձայնությունը» (58): Պահել անխաթար ազգային դեմքը, ազգության բնատիպը. սա է նովելի գաղափարը:

«Ռետենկոտա պատմությունը» տխուր ու սրտառուչ նովել է աշխատանք փնտրող հայ գործավորի մասին: Մի տարի է, ինչ սրա-նրա դուռն է թակում ընչազուրկ այս մարդը՝ «գործ մը ուզելու համար», բայց միշտ մերժվում է, որովհետեւ ներկայանում է հնամաշ հագուստով՝ օձիքները յուղոտած, արմուկները կարկատած, թեև մաշած: Եվ որովհետեւ բոլոր ձախորդությունների ու անհաջողությունների պատճառը հնոտիներին է վերագրում, որոշում է թանկ զոհողությունների գնով ռետենկոտ ձեռք բերել: Ընկալելով, որ այն ազգային հագուստին ոչնչով նման չէ, բայց և նորաձև է, այն կրելը զարգացածության, կրթվածության նշան է: Ուստի, ինչպես խորհուրդ են տալիս մտերիմները, «ուր երթաս, ներս կընդունվիս» (81): «Բանամայի շրանցք մը րանալը» (74) թերևս այնպես խանդավառությամբ շնորհունվեր, վսեմ շնորհակցություն, ինչքան աշխատանք գտնելու հույսը կորցրած Ամրակումի համար ռետենկոտ դնելու գաղափարը: Դժվարությամբ դրամ ձարելով՝ քայլերն ուղղում է Ղալաթի վաճառատուն, որ աչքի էր ընկնում ռետենկոտի առատությամբ: Երկար սակարկելուց հետո խնայած մեծ գումարով գնում է փափագած զգեստը՝ վաղը ավելին վաստակելու, դիրք, հեղինակություն ձեռք բերելու հույսով ու ակնկալությամբ: «Մեկ մը ռետենկոտիս կնայեի, մեկ մ'ալ ապագայիս, թե որչափ փայլուն ըլլալ կ'ուստանար այս ռետենկոտովս: Ինձի այնպես կ'թվեր, թե պանքային ծառան պայուսակը ձեռքն ետեւս, ու առջեւն ծանր-ծանր կանցնեի փողոցներն՝ առանց ուշադրություն դարձնելու այն հազարավոր սքանչացումներուն, որոնք պատահանե-պատահան կ'փոխանակվեին իմ մասին» (82—83): Սակայն օրավոր սպառնում են աճող դրամական պարտքերը, այլևս «անազատ» է Ամրակումը «դրամական տագնապն», իսկ աշխատանք այդպես էլ չի կարողանում ձարել: «Ինչ ընեմ,— տրտնջում է,— արդյոք կոնակս հայտարարություն մը փակցնեմ, որ ամեն մարդ տեսնե և կամ լրագիրներու մեջ ազդարարություն ընեմ, որ հասարակությունը հասկանա, թե ռետենկոտ հագած եմ» (85): Գնալով աղուտանում է հույսը, ամենուր լսվում է՝ «առայծմ մարդու պետք չունինք» պատասխանը, իսկ ռետենկոտը մաշվում ու խոնանում է, ամբողջովին պատկառելի հնության ձև ստանում: Հուշելով գործազուրկ մարդու անլույս օրերի ու անհույս որոնումների ապարդյուն բաղձանքը:

«Անգղիական սիսթեմով գրագիր մը» պատկերի հերոսը գրագրի պաշտոն

վարելու համար վաճառականների դռները թակող երիտասարդն է: Ձգտում է շրջապատում թողնել զարգացած, կիրթ մարդու տպավորություն՝ «անգղիական սիսթեմին լիովին հետևելով, անհարկի ու անտեղի օտար բառեր ու արտահայտություններ գործածելով»: «Անգղիական սիսթեմով դաս առած եմ» (190), — հպարտ մենախոսում է նա և իբրև ասվածի ապացույց, վաճառատանը ոգեշունչ ճառում, ներկայացնում սրբ Զարդ Միշի՝ 12 հատորից բաղկացած ուսումնասիրությունը, որից ոչինչ չեն հասկանում իրեն ապշած լսողները: Փքուն ինքնամեծարման ու օտարամոլության ծիծաղելի, զավեշտական տեսարան է սա: Գրագրի կարծիքով, ինչքան ավելի հետևի օտար «սիսթեմին», որ «միշտ ուղիղ և միշտ արագ է» (194), այնքան ավելի մեծ կլինի թողած տպավորությունը: «Ես սիսթեմեն դուրս չեմ կրնար ելլել» (էջ 196), — ասում է նա ու չի հասկանում, որ ազգային «սիսթեմին» հետևելն ու հավատարիմ մնալը ամենևին էլ հնամոլություն, հետադիմություն չէ՝ «ինն ու տասներորդ դարու լուսավորության հանդեպ»: Եվ հիասթափված «հինգուկու վաճառականներուն» անտարբերությունից՝ չհասկացված «հանճարը» բողոքագիր-հոգված է գրում, դարձյալ «անգղիական սիսթեմով, ուր աղեկ մը ջախջախեց նրանց հետադիմությունը, սուր ակնարկություններով, թեև իրմե զատ ոչ ոք չհասկացավ ինչ բանը ուզելը» (198):

Քասիմը նովելներում քննադատում է «ժամանակի այլ անտեղություններ», որոնց անհեթեթությունը, վնասաբեր լինելու չափ անիմաստ լինելը ցույց տալու համար օգտվում է երգիծական հնարքներից: Դեպքերին երբեմն-երբեմն բարոյախրատական դատողություններով միջամտելը երգիծական նովելներում հուշում է, թե ինչն է նա ընտրել երգիծանքի չափանիշ՝ վատաբարո արարքներով «փորձանք չդառնալը հասարակության գլխին»: Նովելների հերոսներն ընկնում են ծիծաղաշարժ դրություն մեջ՝ չհասկանալով, որ «ըլլալ խառնուրդ մը բազմաթիվ ազգերու, ասել է, թե երթալ դեպի ոչնչություն» (58): Գոշունյանն իր հայացքներով ավելի քան պահպանողական է, պաշտպանը այն ամենի, ինչ հայկական դրոշմն է կրում՝ լեզուն, հավատքը, ծեսերն ու սովորությունները:

Հեղինակն ամենևին էլ անցյալին-հինն կուրորեն կառչելու կոչ չի անում. անկասելի է նորի ընթացքը, միայն թե չաղարտվեն ու չոչնչանան հայկական նկարագիրը ձևավորող հատկանիշներ, նոր ժամանակներ եկած ընտանիքի ու հինավուրց սովորություններ, որոնք ազգային բնատիպի պահպանմանն են նպաստում: Սա ոչ միայն նովելների հիմնական գաղափարն է, այլև երգիծանքին դիմելու նպատակն ու շարժառիթը: Խոսելով նրա երգիծական տեսարանների մասին՝ Բերբերյանը նկատել է. «Քասիմը ամենալին իրավամբ կարող է Պարոնյանի հաջորդը համարվել: «Կյանքի տեսարանների» հեղինակը տաղանդավոր երգիծաբան է»⁵:

Ասվածի լավագույն ապացույցն է «Վաճառականներու ճառը» նովելը: Այս անգամ Գոշունյանն անդրադառնում է մեկ այլ կնճռոտ, բացասական երևույթի՝ «Մթրած» գաղափարներով առաջնորդվող, հնամուլ ու հնավաճառ Կունծիկ աղան ընթերցողին օգնում է հասկանալու, թե ինչքան անմիտ ու անիմաստ են անցյալի երանավետ որոնումները, կյանքում նորը կանխելու փորձերը: Նովելի հիմքում հնի ու նորի զավեշտական բախումն է: Նույնքան զավեշտական ու հնամետ, կյանքում ոչ մի փոփոխություն չսիրող Կունծիկ աղան կանգնում է դեմ հանդիման՝ առևտրական հառաջացյալ հոսանքի առջև՝ նման հողմերի բերանն ընկած ինքնաբույս տատասկի: Երբ այլևս անզոր է տոկալու, դիմագրավելու, կողմ է շարժվում, որպեսզի ուրիշներն էլ չվարակվեն իր խիտով, և ոչ ոք ուշադրություն չդարձնի նրա՝ անցյալի որոնումներին ու ներկայի գանգատներին: Կունծիկ աղան ապրում է մարդկանցից ու աշխարհից մեկուսացած, առանձնացած մի խուլ ու ամայի անկյունում: Ապրում է միապաղաղ կյանքով՝ անտեղյակ իր շուրջը կատարվող եռուզեռին, անցուդարձին: Իրեն ինքնակամ

⁵ Մ. Բերբերյան, Գրականություն և կյանք (Լուսա, 1904, № 6, էջ 100):

դատապարտել է անշարժության: Նրա համար տհաճ է ցանկացած փոփոխություն. և եթե փոքր-ինչ մտահոգվում է, ապա միայն այն պատճառով, որ չի-նի թե վրդովեն իր անդորրը, մազաչափ իսկ փոփոխություն մտնի լծացած, մի-օրինակ ու գորշ օրերի անհրապույր շարանում: Վաճառականներու ձանձն է 30 տարիե ի վեր հրապարակին վրա կը գործե և ինչ որ գործի սկսած օրը, այսօր ալ ձիշտ նույն դիրքին մեջ է, մազի չափ ոչ առաջ գնացած է, ոչ ալ ետ մնացած» (17): Անասելի ժլատությամբ քսակը ոսկեդրամներով լցնելը դար-ձել է նրա գոյության միակ իմաստը, և, չնայած մանրախնդիր հաշվենկատու-թյամբ կուտակած հարստությանը, վարում է սակավապետ կյանք. գոհանում խղճուկ օրապահիկով: Թշնամի լինելով դարգացման ամեն տեսակի առաջա-դիմության՝ նա իր վաճառատան խամրած ու խունացած իրերի «տոկունու-թյունը համակրանքով կդրվատե և նորերուն բնավ չհավնեք: Ամեն մասած տե-ղեր հվրոպական ապրանքներեն զգուշանալ կքարոզե» (20): Նա հասու չէ ժա-մանակակից վաճառականության օրենքներին, ուստի, պարտվում է, դեռևս չհամոզվելով, որ ինքն ու իր նմանները պետք էր, որ վաղուց հեռանային առե-տրական ասպարեզից:

Նիկոլ Աղբալյանը «Տեսարանների» մասին նկատել է, թե նրանցում կան «երևույթներ՝ առանց դրանք շաղկապող ու զուգորդող իսկական պատճառնե-րի»⁶: Նա յուրաքանչյուր «տեսարանում» տեսնում է «ապրուստի խնդիրը», որ «որպես առաջնակարգ կարիք, ամեն տեղ կանգնում է մարդկանց առաջ»⁷: «Ապ-րուստի խնդիրը «տեսարաններում» մարդիկ լուծում են տարբեր կերպ, յուրովի՝ տեղի տալով «բարոյական անկատարությունների, բարոյական խեղաթյու-րումների», որոնք Քասիմե հույս ունի. վերացնել պարբերաբար մեջքերվող բա-րոյախրատական մտքերով: Մյուս կողմից էլ ապականության մատնված բար-քերով, գիտելիքների, դաստիարակության պակասով են բացատրվում նովե-լում «արձանագրված» վատ արարքները:

«Թե ինչու ամեն փեսացու անկեղծ չէ» նովելի հերոսն արդեն ժլատ կու-տակողը չէ, այլ ձարպիկ, խաբեբա երիտասարդ վաճառական, որ կարողու-նում է անորակ ապրանքները վաճառել այնպիսի մեծ վարպետությամբ, ան-թերի դերակատարումով՝ իբրև թե այս կամ այն գնորդի փեսան լինելու ան-հուն ցանկությամբ: Փորձված ու եկամտաբեր միջոց է «փեսայանալը», հեշտ է խաբելը, մանավանդ, եթե հաճախորդները շատ ավելի դյուրահավատ են, շո-ղոքորթ խոսքի հավատացող, գայթակղվող:

Պոլսի դեղատեսիլ, արևելյան ճարտարապետության ոճով կառուցած ար-վարձաններից մեկում՝ Գալբագճլարում է գտնվում ընդարձակ ու բազմամարդ շուկան: Այստեղ վաճառում են ամեն ինչ՝ «կերպաս, կոշիկ, ձեռնոց, անուշահո-տություններ»: Ապրանքների գները մեծապես կախված են հաճախորդների դյուրախարությունից, այնպես որ այնտեղ միևնույն ապրանքը հինգ դուրուշով էլ կարելի է գնել, տասը դուրուշով էլ: Քիչ դեր չեն խաղում վաճառողների շողում լեզուն, գնորդների հետ վաղեմի ծանոթությունն ապացուցող բառեր շոայլելու: Շուկա եկած Կուռնելիոս աղայի կինն ու դուստրը այնքան են շոյվում Արտաշի հաճոյախոսություններից, Կուռնելիոս աղային փեսայանալու նրա ակնարկներից, որ գնված կերպասին ավելի վճարելով՝ գոհ վերադառնում են: Սակայն տասնհինգ օր անց, աղայի կինը, տեսնելով, որ Արտաշը իրենց չի պատվում իր այցելություններով, սլատճառը իմանալու, բարեկամությունը նո-րոգելու մտադրությամբ, քրոջ հետ գնում է շուկա: Իսկ Արտաշը, «բնավ իրենց կարևորություն չտալիս գատ՝ ուրիշ միամիտ մայր ու աղջիկ ձեռք անցուցած»⁸ ձիշտ միևնույն բանաձևը կկրկնե անոնց, ինչ որ իրենց րսած էր» (47):

XIX դարավերջի իրականությունն արնդունել է անսովոր վատ տեսք՝ «Թե ինչու՞ ամեն ժամասեր Բրիտանյա չէ» նովելում հեղինակը տարբերակում է «ժամասեր», «քրիստոնյա» հասկացությունները: Ամեն օր եկեղեցի է գնում

6 Ն. Աղբալյան, նշվ. աշխ., էջ 529,

7 նույն տեղում:

Մերկեր աղան, «սրտաբուխ» բարոգում է քրիստոնեական պատվիրանները. «Քրիստոնեության հով մը կար վրան: Մինչև ալ սուրբի ձեեր ունի» (121): Սակայն նրա բարեպաշտությունը սոսկ դիմակ է: Թվացյալ հեղությունն ու խոնարհությունը անհրաժեշտ են «երկրպագությունը ըրած ժամանակ ուրիշները խաբելու կերտին վրա խորհելը» (123) քողարկելու համար: Հեղինակը ծաղրում և պատկերացնում է անում Մերկեր աղայի և նրա նմանների բարեպաշտությունը:

«Թե ինչո՞ւ գրագետի եղած վնասումը նպարավաճառին չըլլար» նովելի հերոս Հրաչյանը գրագետ է, օրնիբուն գրում է, ուսումնասիրում, տքնում՝ լուրջ դործեր ստեղծելու: Հուսահատության ժամերին, ինքնիրեն մեծանուն գրողի հովեր առած, ավելի ամուր է կառնում իր վտիտ գրչին, սպասում ու սպասում իր «անվերջանալի ապաղաններին, երբ կհասկանան ու կդնահատեն իրեն»:

Իրեն դրագետ է համարում, հեղինակություն, անգամ խիստ «հմտալից մի իմաստասիրություն» պատրաստում՝ «Թե ինչպես կհարստանան մարդիկ» վերնադրով, որտեղ չափազանց մանրամասն ու «իմաստալից» շարադրում է մարդկանց հարստանալու ուղիները: Սակայն հեղինակավոր ձևակերպումները մնում են թղթի վրա, ինքն իսկ լավ չի հստակում իր առաջադրած ուղիներին, ընտրել է հաց վաստակելու, ապրուստի նոր ձև ու եղանակ՝ հացկատակությունը: Ստեղծագործական երկունքի պահին այլ բան է գրում, «վսեմ գաղափարներ» դավանում, իսկ առօրյա կյանքում՝ պայմանների թելադրանքով վարպետորեն կերպարանափոխվում, դիմափոխվում է պնակալեզի: Նպարավաճառին պարտք է մոտ 200 դուրուշ և չի էլ մտածում վերադարձնելու մասին: Իսկ երբ նպարավաճառը պահանջում է հաշիվը, նրան մեկնելով պարտքերի գրառումների տետրը, այն աչքի անցկացնելուց հետո Հրաչյանը սկսում է գովեստներ շուայել. «Շատ լավ կգրեք» (100): Իզուր է ջանում նպարավաճառը այդ «կայուն» համոզմունքների տեր շողոթորթից պարտքերն ստանալ: Վերջինս երկարաշունչ մենախոսությունն ավարտում է զարմացած հարցումով՝ միթե՞ նպարավաճառը իրեն վարձատրված չի զգում՝ այդ հազվագեղ ասվող գովեստի խոսքերը լսելով, և, վերջապես, մարդիկ ինչո՞ւ չեն կարողանում խոսքի արժեքը հասկանալ:

Քասիմը, այսպիսով, նովելներում պատկերում է մարդկանց, ովքեր պարտուպատշաճ ձևերի տակ թաքցնում են իրենց անազնիվ ու սնամեջ էությունը: Հեղինակն անչափ կարեկորում է կրթության ու դաստիարակության հարցերը: Հասարակական կյանքում տեղ գտած առանձին բացասական երևույթներ բացատրվում են դրանց պակասով կամ ոչ ճիշտ, սխալ դաստիարակությամբ: Բնածին չեն մարդկանց թերությունները, թեպետ նրանց մեջ բնական միտում կա դեպի չար, և միայն դաստիարակության ու կրթության շնորհիվ «մարդը դեպի բարին կառաջնորդվի»: Տակավին վաղ հասակում մարդուն պիտի տալ առաքինության, պարտաճանաչության, պատվավոր կյանքի դասեր: Տիեզերքի ընդհանուր կանոնին, որ շարունակ առաջադիմել է պահանջում, կյանքում համաքայլ գնալու երաշխիքներն են հարստությունը, նյութական զարգացումը: Սակայն, նյութականի հետ պետք է միևնույն գծի վրա պահել մտավոր հարստությունը, հոգու ազնվությունը, որպեսզի ոսկու վայելքն զգալի դառնա: Ոչ միայն «խարված մայր մը» նովելում մայրաքաղաքում կրթված աղջկա մայրը, այլև մի շարք «տեսարաններում» հերոսներն ընկնում են «խաբված», ծանր կացության մեջ: Որբեակյրի կինը («խաբված մայր մը»), վաղ գրկվելով ամուսնուց, մեծ դժոգությունների գնով մեծացնում է աղջկան, կրթության տալիս դարձնելով, հեղինակավոր մանկավարժների ձեռքի տակ: «Աղջիկը մայրենի լեզվին հավասար դյուրությունովը կխոսի տաճկերեն, գաղղիերեն, հունարեն, անգլիերեն, հրեշտակի պես կերդե ու սոխակի պես կդեղգեղե: Անոր հետ խոսելու և արտասանած խորիմուստ բառերուն նշանակությունը հասկանալու համար՝ ստիպված են երեքլեզյան ընդարձակ բառարան մը հետեեր պատեցնել» (3): Շատ երիտասարդներ են խնդրում աղջկա ձեռքը, որոնք, ի դժբախտություն մոր և աղջկա, ոչ դեպաններ էին, ոչ երեկի անձնավորու-

թյուններ, այլ՝ «հասարակ դասակարգի երիտասարդներ»։ Աղչիկը մերժում է բոլորին՝ բարձր դասի երիտասարդի հետ ամուսնանալու հույսով, որ այսօր տարի ի վեր» աղոտանում է։ Մայրն իրեն հուսահատ ու խաբված է զգում, շատ ուշ համոզվում է, որ զուր վատնել է եղած շնչին կարողությունը՝ աղչկան կերթուքի տալու համար։ Առանց անգլիական հեղինակներն անցնելու էլ «կարելի է երջանիկ ամուսնություն կնքել», տխուր խորհրդածում է նա։

Հեղինակը սուր սարկազմով նկարագրում է խաբված մոր «սրտացավ» բառակամների փութաշան ու շտապ կայացրած «ժողովը»՝ փեսացու ընտրելու համար։ Նրանց պատկերացումները լավ «քավալիսի» մասին կրկին ու կրկին հանգում են փեսացուի նյութական կարողությանը։ Ինչքան ծիծաղելի, միաժամանակ տխուր ու տաղտկալի են «խնդրի» շուրջ» ծավալվող նրանց մանվածապատ խոսակցությունները։ Նովելի ավարտին, մայր ու աղչիկ «անծանոթ անկյուն քաշված, երբեմն-երբեմն խլավուզների (միջնորդ կին) այցելությունն են ընդունում», որոնք «կպախարակեն զմեզ այնչափ ոսկին կրթության վրա վատնելու համար և կհավաստեն, որ եթե հիմա հազար ոսկի ունենայինք, շնորհքով փեսա մը կրնայինք առնիլ։ Բայց որովհետև ալ դրամ չունինք, «Գոնե տասնութը տարու է ըսես կըսեն, և ես յոթը տարիս ի վեր ամեն հարցնողին տասնութը լմնցուց, տասնութին մտավ» կը կրկնեմ, առանց օգուտ մը քաղելու» (16)։

Մյուսնք ոչ միայն «քաղաքակրթության», քաղցնիական բարքերի կրողներն են, այլև՝ զոհերը։ Դպրոցի, կրթության ու դաստիարակության շուրջ մտորումներում հեղինակը տարիների հեռվից հիշում է վարժապետին՝ «Մեք վարժապետը» տեսարանում։ Վանող էր վարժապետի արտաքինը. «խոժոռ դեմքով, հիսուննոց մարդ մ'էր մեր վարժապետը, որ առաջին տեսնողը պարզապես չիղերով կապված ոսկորներու հավաքածո մը պիտի կարծեր զինքը, որոնք բացորոշ կերպով կրնային համարվիլ ամուր ու պիրկ մորթին տակեն» (49)։ Դպրոցում քայլում էր այնքան ինքնավստահ, որ ոտնաձայները «հայտարար նշան էին վարժապետին և հետևաբար գավազաններուն ներկայությամբ» (49)։ Երկու «էնթարի» ունեւ՝ երկու պատկառելի հնութուններ և ապրում էր նրանց հետ կապված քաղցր հուշերով։ Երիտասարդական տարիներին անգիր սովորած գրաբար պարբերությունները լրացնում էին գիտելիքների ողջ պաշարը, որ մշտնջենապես նույնն էր՝ առանց որևէ բառ ավելացնելու կամ պակասեցնելու։ Խնամքով ու մեծ հոգատարությամբ կառչել էր երեխաների մտքին ոչինչ չտվող այդ պարբերություններին։

Ինչպես նախորդ, այնպես էլ «Գրագեաներու շուրջը» պատկերում վարժապետական ժողովը իր ողջ անհիմնությունով, շահեկան բանակցություններով, երգիծանքի թիրախ դառնալու շատ կողմեր ունի, որ ժամանակին երգիծել է նաև Հ. Պարոնյանը։ Խմբվել են գրագետները՝ դպրոցի, կրթության կնճռոտ խնդիրները լուծելու համար։ Երբար են հաջորդում «ճառեր, ուղեըմներ, հիշատակադրներ, ծրագիրներ և այն ամեն աները», որոնք մտքես իսկ չէին անցնել, թե նյութ պիտի ըլլային վարժապետական ժողովին համար» (211)։ Ահա վսեմաշուր հոգտորը, որին թվացյալ հետաքրքրությամբ, դեմքի լուրջ արտահայտություններով ունկնդրում էին և մտքում «երկու խոսքեն մեկ երազում, որ կարճ կապեր» (210)։ Ահա և մի ակնոցավոր պարոն, «որուն կերևի թե րադուկները ավելի լավ կտրամաբանեն, քան թե գրիչը, հաղթապանծ սկսեց թղթատիլ մի տետր, որուն մեջ պետք է վճռուած ըլլար հայ դպրոցներու բախտը» (210)։ Վարժապետական ժողովի նյութ էին դարձել գեղարվեստական ճաշակը զարգացնելու, բանաստեղծական երևակայությունը սրելու, «հանգերու ձոխությունը ընկալելու» «խնդիրները»։ Երկար բանավեճերից հետո մի խղճուկ, «ոչ միայն հացիվ» ապրող վարժապետ հարցնում է, թե վարժապետական հաջորդ ժողովը երբ պիտի գումարվի։ «Հավանաբար ուշ, «որովհետև այսօր այնչափ խնդիր լուծեց ժողովը, որ այլևս կես դար վարժապետական ժողով դուրմարելու հարկ չմնաց» (216)։

Լուրջ խորհրդածությունների տեղիք են տալիս ընտանեկան երջանկության

թևման, րնաանիքում և հասարակության մեջ կնոջ դերին, պարտականություններին, իրավունքներին առնչվող հարցերը:

«Թե ինչու պետք չէ ընկնիլ» պատկերում իր գլխովն անցածն է պատմում ճակատագրի դաժան հարվածներին դիմագրաված այրին: Ապրել է անհոգ կյանքով, հարստության ու շքեղության մեջ: Սակայն ամուսնությունից 10 տարի անց մահանում է ամուսինը՝ «երկու գավակների խնամքը թողնելով կնոջ հույսին»: Այրի կնոջ խոստովանությունը, թե չպետք է ընկնվել ճակատագրի դաժան հարվածներից, գեղարվեստական պատրվակ է երեխաների մոր և կնոջ դերը, պարտականությունները ընտանիքում և ընտանիքից դուրս ցույց տալու համար: Լիովին նվիրվում է գավակների դաստիարակությանը, սովորեցնում ինչի՛ն սրտացավ, բարի, առաքինի, բարեկիրթ. «Անառակություն չբպիտի ընենք, ամեն օր աղոթք պիտի ընենք, որ Աստված մեզի բարիք տա» (90): Եվ մայր ու գավակուներ ծնկաշոթ, ջերմհունդորեն աղոթում են, մեծ հանդիսավորությամբ մրմնջում «Հայր մեր»: Կինը առաջին հերթին պարտավոր է լինել իր երեխաների դաստիարակը: Շարունակելով պատմել այրիացած կնոջ գավակների մասին, հետևելով նրանց արարքներին՝ հեղինակը կամենում է նշել, որ «ծնող մի որչափ ալ աղքատ ըլլա, որչափ ալ միջոց չունենա, կրնա ժամանակ գտնել ու ամեն օր խրատ հորդոր կարգալ անոր»:

Գրուշյանը կողմ է «մոր դպրոցում» և «ազգային դպրոցում» «միսթիկ» դաստիարակության սկզբունքներին: Ընտանիքում իշխող ոգին պիտի լինեն աստվածադերս խոսքերն ու գործը, որպեսզի բազում ախտերը չկրժոտեն մարմինը, և տակավին փոքր գավակները հետո էլ մտքերով ու խոհերով չմոլորվեն: Երբ կինն ինքն է անազատ վիճակում, սահմանափակ են իրավունքները, չի կարող գավակներին լավ ապագա ապահովել: Հեղինակը քաջալերում է կնոջ գործնական լինելը, նրա դերը չի սահմանափակվում սոսկ երեխաների մայր ու ամուսին լինելով: Բավական է ասել, որ այրիի փոքրիկ տնակը վեց ամիս անց կատարյալ գործատուն էր հիշեցնում. նա իբրև ապրուստի միջոց էր ընտրել գերձակությունը և, մյուս կողմից, թաղի չափահաս աղջիկներին կար ու ձև էր սովորեցնում: Դրա շնորհիվ շատ աղջիկներ փրկվում են անգործության ու մեկուսացումի վտանգից:

Մարդու բնավորությունը ձևավորվում, հղկվում է ընտանիքում՝ ծնողների բարեխնամ ձեռքի տակ: Մայրը «գավակին ամենեն լավագույն ապագան» կարող է ապահովել, եթե ինքը կրթված է:

«Աղջիկտեսը» խլավուզների գործունեության պատկեր է: Նովելն սկսվում է «Խլավուզ» բառի բացատրությամբ: «Առաջնորդ կնշանակե և պոլսեցիները ամուսնական միջնորդներին խլավուզ տիտղոսը կուտան» (164): Այս «պատվավոր» տիտղոսը կրողները «պառավ կիներ են գլխավորաբար և կծառային երկու սեռն ամուսնանալու տրամադրություն ունեցողները տարիներով պատիր հույսերով ու անիրականանալի ծրագրերներով խաբելու և ամուսնութենեն առաջ փոքրիկ գումար կորզելու, ամուսնութենեն վերջ հինգ-վեց ոսկի կորզելու երկու կողմն» (166): Խլավուզ Շողիկ հանրմի այցելությունը «ընտանիքի մրտուն» այդ նպատակով է: Միջնորդները, իրենց գործունեության մեջ հմտացած, ավելի լավ գիտեն, թե Կ. Պոլսի նման ընդարձակ և ալազան ազգերից բաղկացած մայրաքաղաքում, «ուր շատ անդամ դրացիներն իսկ իրար չեն ձանշնար, ինչպես կարելի է գիտնալ, ո՞ր աղջիկը ո՞ր տղային հարմար է և կամ ամուսնանալիք երկու անձանց պայմանները կհարմարին իրարու» (165): Ամուսնաառևտրական բարքերը կյանքի են կոչել խլավուզներին: Ամուսնություններում կարևորվում են դրամոօժիտը և փեսացուի հարստությունը: Թե՛ միջնորդ կանայք, թե՛ նրանց օգնությունն ակնկալողները նման են միմյանց, նրանց հետաքրքրում են կենցաղային անհրաժեշտ պայմանները: «Եվ որովհետև, մայրաքաղաքիս ամուսնության անհրաժեշտ պայմանը սերը չէ շատ անգամ, երկու ամուսնանալիք անձանց պայմանները կհարմարին իրարու, իսկ գիրար սիրել, իրարու համակրել ամուսնութենն վերջ կարգադրվիք պայմաններ են» (165): Առաջին և անհրաժեշտ պայմանները կենսական ամուր և

«լուրջ» հիմնավորումներ ունեն։ Օրինակ. երիտասարդը երեք հարյուր ոսկի դրամօժիտ է ուզում՝ առանց նկատի առնելու աղջկա ընտանիքի անցյալը, տարիքը, աղջկա դաստիարակությունն ու գեղեցկությունը։ Մեկ ուրիշը շորս սենյակով կահավորված տուն է ուզում, թեկուզ և աղջիկը իրենից տարիքով մեծ լինի։ Արհեստավորը ուզում է այնպիսի տուն «փեսա երթալ», որ շորս տարի կամ որոշ ժամանակ բնավ «ծախսերու չխառնվի»։ Եթե իրենց հաշվարկներին չհամապատասխանող մեկին գտնելու համար սեփական փնտրտուքի մեջ անհաջողության են մատնվում, դառնում են հուսահատ ու թերահավատ, այն-ժամ «երմացնող արևից աշխուժացող գեռունների պես աշխուժանում ու կայտառանում են իրենք՝ խլավուզները։ Մտնում են տնետուն, համոզում, հորդորում, շողորթոթում, մինչև որ «հարմարեցնում են քիչ-շատ նպաստավոր առաջարկները»։ Ինչն է նրանց հաջողության գաղտնիքը։ Նախ, ունեն «գլուրահավատների ստվար ցանկ», միաժամանակ վարպետ են նորանոր ստերի, պերճ բնութագրումների, մտացածին փեսացուներով «խեղճ մայրերին հուսադրող պատմությունների»։

«Աղջիկտեսի» սյուժեն ծավալվում է երազանքի ու իրականության հակադրությամբ։ Սուրբիկը չափազանց վշտացած էր, սիրտը կտրված. «ուր էր երևակայած, ո՛ւր է իրականը»։ Նովելի պատկերները պարզում են իրականության անմաքուր դեմքը։ Սերը, զգացմունքները երևակայածին, հիվանդագին ապրումների արդյունք են։ Շահախնդիր իրականությունը դրանց մասին մտածելու ժամանակ իսկ չի տալիս։ Մինչև ե՞րբ են շարունակվելու աղջիկտեսի անսլակեղջ ու հաշվենկատ պատմությունները։ Հարցը մնում է անպատասխան։ Բավական է ասել, որ Սուրբիկն ու մայրը հաջորդ շաբաթ կրկին հյուրընկալում են խլավուզին՝ մխիթարվելով, որ «ազգիկ կա մայրաքաղաքիս մեջ, որ մինչև 40—45 տարեկան հասակը աղջիկտեսի կելլա շաբաթը մեկ-երկու անգամ առանց կարենալ ամուսին մը գտնելու» (189)։

«Թե ինչո՞ւ կը սիրեմ Ժուլին և ոչ Ժյուլին» նովելում լրագրավաճառ Ղունկիանոսին մնում է «սիրել» ու «ամուսնանալ» Ժուլին, այն փոքրիկ շանը, որ նվիրել էր «սիրունիկ աղջիկ մը»։ Նա դառնորեն զղջում է այդ աղջկա հետ իր մտերմության համար՝ տխուր խոստովանելով. «Երեք-չորս տարին ի վեր մայր ու աղջիկ ինչ դժոխային մեքենայությունով կը խաբեն եղբր զիս՝ ամբողջ քսակըս պարպելով... և հիմա, որ բնականաբար ինձմե հարուստ մը գտած էին, ալ չկրնային զիս տուն առնել» (231)։ Զգանելով ոչ մի սրտակից բարեկամ, «ամբողջ սերը կը նվիրեմ այս կենդանիին, որ իր տիրուհի են ավելի կգնահատե սիրո արժեքը» (231)։

«Թե ինչո՞ւ վերջին խափը կ'ընչեմ է տաճ մեջ» նովելում ընտանեկան տարածայնությունը զուտ շահագիտական բնույթ ունի։ Զաքեոս աղան, որ յոթ գավակների հայր էր, «մեծ մտածմունքի մեջ էր երկու ամիսն ի վեր»։ Ինչն էր դրա պատճառը։ Նրա եկամուտը պակասել էր. գրեթե անգործ էր մնացել, իսկ յոթ տարուց ավելի երկրորդ հարկի սենյակներից մեկում վարձով ապրող «պեքեարը» (ամուրի վարձվոր) տունը թողել-հեռացել էր։ Անմխիթար վիճակից դուրս գալու ելք էր մտմտում։ Ի՞նչ աներ, ո՞ւր զնար, ինչպե՞ս հոգ տաներ գավակներին Պոլսի նման քաղաքում, «ուր օդն ու ջուրն իսկ դրամով կգնվի» (233)։ Նրան տանջալի մտքերից հանում է կինը՝ Թագուկը, նախահարձակ վեճով, թե ինչո՞ւ «խենթեցավ» ամուսինը. «Պեքեարի պակասությունն ի՞նչ էր, որ յոթ տարի տունդ նստած էր, ի՞նչ կեշություն տեսար, որ ելար կոիվ բրիր մարդուն հետ, ու սա ծունր բերի գլուխս» (242, 243)։ Փոխադարձ վիրավորանքներով միմյանց դիմելուց հետո կինը հայտնում է, որ երիտասարդը անտարբեր չէր իրենց աղջկա նկատմամբ և ամուսնանալու մտադրություն ուներ։ Կարիքը գորեղ է սկզբունքներից։ Տանտերն ընկրկում է։ Նա պատրաստ է ներելու, «մոռանալու» «տունը նստող մանչուն հասցրած վիրավորանքները»։ Թագուկը ստիպում է ամուսնուն զիջել, ներողամիտ լինել երիտասարդ կենվորի հանդեպ։ Նրան երիտասարդի հարստությունն էր հետաքրքրում։ «Թե ինչո՞ւ չեմ ամուսնանա» նովելում երիտասարդի խոստովանությունից երևում է, որ

պատճառները դարձյալ զուտ նյութական, շահադիտական բնույթ ունեն։ Զի ամուսնանում, որովհետև աղջիկներից մեկին տնփեսա է պետք, մյուսին ձեռնարու է ատամնարույժը, մեկ ուրիշին՝ դորժավոր-պաշտոնյա կամ պարզապես աղջկա համար դրամն է պակասում՝ դրամօժիտ տալու։

«Հաբսի մը պատրանքը» նովելում հարսը դժբախտ է, դառնորեն զղջում է մարդկանց հավատ տածելու, վստահելու համար։ Նա ադա՜ մարդկանց ձեռքին ակամա դորժիք է դարձել՝ նրանց դրամ կուտակելու ճանապարհին։ Նրա ամուսնու՝ Արմենակի և սկեսրոջ համար, որ երիտասարդական ավյունով ու եռանդով է գործում՝ տարված անվերջ հարստանալու գայթակղիչ գաղափարով, խորթ են սրբությունները, պատիվ, բարոյականություն հասկացությունները։ Նրանք նախապես լավ են վերաբերվում հարսի նկատմամբ. «Ինչ լեզու, ինչ գորով, ինչ սեր, պարզապես կգուրգուրային վրաս» (126)։ Եվ շարունակում են իրենց իսկական դեմքը քողարկել այնքան ժամանակ, մինչև իրենց հաջողվում է աղջկա հոր տունն ու եկամտաբեր վաճառատունը ժամանակավորապես Արմենակի անվան փոխանցել։ Թշվառ կիներ հավատալն ու վստահելը համարում է անփորձություն։ Այնպես անճանաչելիորեն են փոխվում շարամիտ ու փորձառու հափշտակիչները, որ թվում է, թե «զգացում ըսած բանը բնավ բարև տված չէր անոնց» (135)։

Դրսի աշխարհի շահադեմ հարարերությունները տեղափոխվել են ընտանիք, իրար հակադիր կողմերում են դյուրահավատ, վստահող, երջանկության պատրանքներով ապրող հարսը և առնական ձևերի, մաքուր զգեստի տակ թաքնված, շահամոլ ամուսինն՝ իր մոր հետ։ Մոռենք իրենց ուխտագնացությունը ու աղոթքներով իզուր յղիտի հուսան ամուսնու և սկեսրոջ նախկին սիրազեղ վերաբերմունքը իրենց աղջկա նկատմամբ։ Մեկ տարի անց աղջկա հայրը պահանջում է վաճառատան իր իրավունքները, բայց իզուր օրենքը, կանոնավոր ձևակերպումներում որևէ կեղծիք չգտնելով, արդարացնում է սկեսրոջը, իսկ հայրը՝ վշտից կաթվածահար, գամվում է անկողնուն՝ նյութական որևէ միջոցից զուրկ։ Դյուրախաբ հարսը դառնում է ակամա միջնորդ ու թըշվառ գոհ՝ հարստանալու համար նենգ ու անաղնիվ միջոցների դիմող ամուսնու ու սկեսրոջ ձեռքին։ Քասիմը նկատում է, որ կայուն են առանց հետին նրստալիների ու նյութական հաշվարկների կնքված ամուսնությունները։

«Դարավերջի գրագետը» նովելում Քասիմը զավեշտական միջադեպերով ներկայացնում է այն հանգամանքներն ու պայմանները, որոնք հասցնում են ստեղծագործ մտքի ամլության։ Դարավերջի գրագետները, որոնց նմանները շատ էին, չնայած իրենց նորավեպերի, ոտանավորների, գրչակերտ պատկերների առատությանը, սալոններում գրաված առաջնակարգ դիրքին, վերջիվերջո միայն «ամուլ ասպարեզ» են թողնում իրեն՝ «հուսահատորեն կծկվելու համար անկյունի մը խորշը և կամ թիկնաթոռին մը ետին» (64)։ Ինչպես շատ գրողներ, այս գրագետն էլ զուրկ չէ ստեղծագործական երևակայությունից, սակայն իր երևակայությունը «գաղղիացիներեն օրինակած ըլլալուց այն կողմ չի անցնում, ֆրանսիացի մը կապրի գլխովը» (65)։ Նրա համար մեծ բարեբախտություն է, որ ծնունդով գավառացի չէ, այսուհանդերձ, սրտամաշուկ վիշտ է «եվրոպացի ծնողներն չլրնալ սերիլը» (65)։ Շատ անգամ կխորհի թե ինչ պիտի ըլլար, եթե Փարիզ կամ Լոնտրա ծնած ըլլար, և այնչափ կխորասուզվի իր այս խոհերուն մեջ, որ հագիվհագ արշալույսին կրնա սթափիլ» (65)։ Մեծամիտ ինքնավստահությամբ, ինքնահավան, հոնտորական շարժումներով ու ձեվերով, մարդաշատ վայրերում, շոգենավերի մեջ, ծանոթ-անծանոթների մոտ որսում է հարմար պահ, քանդում «ձեռքի թուղթերի ահաղին կապը» և արտիստիկ ձևերով, ձայնին հուզախառն երանգ տալով հաջորդաբար կարդում է իր ստեղծագործ մտքի «բռնկումները»։ Դարավերջի գրագետի երկարաշունչ փրական երկերը ինքնանպատակ են, կյանքից կտրված, անառնելի։ Մտկերեւոյսին, անարվեստ երկերի հեղինակները հարյուրներով են հաշվվում «գարուսվերիկ սերնդյան մեջ»։

Արևմտահայ նորավեպի տեսության և պատմության հարցերի վերաբերյալ իր ուսումնասիրության մեջ Գրիգոր Հակոբյանն անդրադառնում է նաև Միսաք Գոշունյանի նորավեպերին՝ տալով տիպաբանական մի քանի խորիմաստ բնութագրումներ: Գոշունյանի նորավեպերի ժանրային տիպը վերագրելով «երկխոսության նորավեպին»՝ գրականագետը այն լրացնում է նաև «դիմանկար նորավեպ» ժանրային տարբերակով: «Բարբերի ճեպագրումային» դիմանկար նորավեպերի՝ անդրադարձումներում ուղագրավ է Միսաք Գոշունյանի փորձը. որի այսօրինակ ստեղծագործություններում, — գրում է նա, — դիմանկարային լրատվության առարկայացման հոսքը բաղճյուսված է դիալոգների այնպիսի շերտերին, որոնք միմիայն կենտրոն-միջուկի դիմանկարն ամբողջացնելու սատարողական գործառնություններով են հանդես գալիս»⁸:

Ավելացնենք մի ժանրային տարատեսակ ևս՝ «գրույց, նորավեպեր»՝ ղրուցագրություններ: «Թե ինչու չեմ հաջողիր», «Հարսի մը պատրանքը», «Թե ինչու չեմ ամուսնանար» և այլ նովելներում հեղինակը հանդես է գալիս հերոսների ղրույցները գրի առնողի դերում: Եվ «համապատկերում դիմանկարը գոյավորվում է» ոչ միայն «եսաստեղծ լրատվությամբ»⁹, այլև բարբերի ու կենցաղի համապարփակ լրատվությամբ:

Միսաք Գոշունյանի գրական-հասարակական գործունեությունը արժանի է վերագնահատության, և նրա նորավեպ-պատկերների վերլուծության մեր այս փորձը կցանկանայինք ավարտել նիկոլ Աղբալյանի խոսքերով. «Խորհուրդ ենք տալիս ամենքին ձեռք բերել Քասիմի գիրքը. ոչ ոք չի ափսոսա կորցրած ժամանակը, դեռ շնորհակալ էլ կլինի»¹⁰:

«ЗРЕЛИЩА ЖИЗНИ» МИСАКА ГОЧУНЯНА

А. А. СЕВУМЯН

Резюме

Мисак Гочунян занимает свое особое место в истории западноармянской прозы. Его реальные сюжеты подтверждают точку зрения о том, что «Касим—человек действительности, человек жизни».

«Зрелища жизни» вызывают интерес острой критикой дурных нравов и социальной несправедливости.

В «Зрелищах жизни» Касим продолжил литературные традиции Пароняна, создав новеллы с комическими героями в комических обстоятельствах.

⁸ Ի. Հակոբյան, Արևմտահայ նորավեպը, Ե., 1996, էջ 125—126:

⁹ Նույն տեղում, էջ 126:

¹⁰ Ն. Աղբալյան, Եղվ. աշխ., էջ 528: